Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ << Կապանի համար 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Թեմա՝ Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում:

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Բալայան

Ուսուցիչ՝ Սվետլանա Ալեքսանյան

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն 1
Գլուխ 1: Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները 4
Գլուխ 2: Հետազոտության ընթացքը 9
Խաղի հոգեթերապևտիկ նշանակությունը 11
Տվյալների վերլուծություն 15
Եզրակացություն 16
Օգտագործված գրականության ցանկ 23

Ներածություն

Երեխայի զարգացման գործում կարևոր դեր ունի խաղը,որը նպաստում է երեխայի զարգացմանը առհասարակ.խոսք, հոգեկան և ֆիզիկական վիճակ: Այն

հանդիսանում է անհատի վարքի և խոսքի ձևավորման հզոր միջոց: Երեխան ձևավորվում է որպես անհատ դեռ վաղ մանկության շրջանում:Հատկապես կարևոր է, թե երեխան ինչ դեր է վերցնում իր վրա խաղի ընթացքում: Դերախաղը նպաստում է բառապաշարի համալրմանը և ավելի դյուրին է դարձնում շփումը շրջապատի հետ: Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ունի ուսումնադաստիարակչական մեծ նշանակություն: Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով,որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկան աշխարհում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները, զարգանում են հոգեկան այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանի անցնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը,խելքը և երևակայությունը:

Հետազոտության արդիականությունը: Կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի ստանձնած դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և պայմանավորված են նրանով, որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները: Դպրոցի հիմնական նպատակը երեխաներին ոչ միայն ապագա կյանքին նախապատրաստելը, այլև նրանց այսօրվա կյանքը հետաքրքիր և բովանդակալից դարձնելն է:

Հետազոտական աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել՝ դերախաղերը ինչպես են ազդում գիտելիքներ ձեռք բերելու, երեխայի խոսքի, ստեղծագործական երևակայությունը զարգացնելու, անհատականության դրսևորումանը նպաստելու, զարգացնելու, խմբով աշխատելու կարողության զարգացնելու, վերլուծելու, համադրելու, գեղարվեստական մտածողության, գեղագիտական ճաշակի ձևավորելու գործում:

Վարկած: Ենթադրվում է՝ խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական

խնդիրները՝ հատկապես կրտսեր դպրոցում:

Այս նպատակին հասնելու համար իրագործել ենք հետևյալ **խնդիրները.**

- Թեմային առնչվող մասնագիտական գրականության ուսումնասիրություն
- Դերախաղերի համար նյութերի ընտրություն, դասապրոցեսի համար նյութերի նախարատրաստում,
- Երեխաների հետ գործնական աշխատանք, նյութերի փորձարկում,
- Արդյունքների ամփոփում և վերլուծություն

Հետազոտության ընտրանքը: Փորձարարական հետազոտությունն անց է կացվել Կապան քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի IIբ դասարանում: Հետազոտությանը մասնակցել է 22 դպրոցական:

Գլուխ 1: Կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկությունները

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ: Մի կողմից, երեխան իմպուլսիվ է, անհանգիստ, ունի ոչ կայուն ուշադրություն, իսկ մյուս կողմից, քանի որ նրա մոտ արդեն ձևավորվում է պահանջմունքների նոր մակարդակ, նա սկսում է գործել, առաջնորդվելով որոշակի նպատակներով, արժեքներով, զգացմունքներով: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ: Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում է հայտնվում *կամածինության* ձևավորումը /պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում/:Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է **խաղալու պահանջմունքը**: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև ***շարժվելու պահանջմունքը***, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխայի ուշադրության զարգացմանը, կենտրանանալու կարողությանը: Ուսուցիչը նաև կարող է հմտորեն կազմակերպել երեխաների հանգիստը՝ ներառելով խաղեր և շարժողական վարժություններ, որոնց ընթացքում երեխան լիցքաթափվում է և

կարողանում արդյունավետ շարունակել ուսումը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է **նոր տպավորություններ ստանալու պահանջը**, որի հիման վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Մանկավարժության և հոգեբանության ոլորտը ներկայացնող մասնագետները գտնում են, որ երեխայի անհատականությունն ու աշխարհընկալումը առաջին հերթին լիարժեք և ամբողջական կերպով արտահայտվում են խաղի միջոցով:Այն երեխայի համար ոչ միայն կենսաբանական ներքին պահանջ է, այլև ճանաչողության միջոց և ուսուցման բաղկացուցիչ մաս:Խաղն ունի այնպիսի մանկավարժական դերակատարում, որ կարող է երեխային ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ:Խաղը՝ որպես գիտելիքի յուրացման միջոց և մեթոդ,կարևոր է և արդյունավետ: Խաղի միջոցով երեխաները ինքնաբերաբար ուշադրությունը սևեռում են դասապրոցեսին և նույնիսկ ամենադժվար, անհետաքրքիր ու ձանձրալի թեման սովորում են հեշտությամբ:Խաղի միջոցով երեխաները հետաքրքրությամբ ու մեծ ոգևորությամբ են կատարում ուսուցչի հանձնարարությունը և արդյունքում ենթագիտակցորեն յուրացնում ուսումնական ծրագրով նախատեսված դասանյութը:Խաղերը ներառվում են դասապրոցեսում ոչ միայն դասերը հետաքրքիր ու մատչելի դարձնելու նպատակով:Միաժամանակ դրանք ընձեռում են հասակակիցների հետ շփման այնպիսի հնարավորություն, որի արդյունքում երեխան ձեռք է բերում ինքնուրույնություն, որոշակի հմտություններ, համագործակցության և փոխօգնության պահանջ, վարքի նորմեր:Խաղի շնորհիվ ակտիվանում է երեխայի հուզական աշխարհը, զարգանում է երևակայությունը:Նա սովորում է հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները:Համատեղ ուսումնական գործունեությունն ու խաղը երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը: Ըստ հոգեբանների՝ երեխայի անհատականությունը վառ կերպով արտահայտվում է խաղի միջոցով, քանի որ խաղը յուրաքանչյուր երեխայի կենսաբանական պահանջմունքն է:Այսպիսով՝ խաղի շնորհիվ երեխան ճանաչում և բացահայտում է երևույթները, առարկաները, իրեն շրջապատող

աշխարհն ու մարդկանց:Եվ ահա ինչու խաղի միջոցով ուսուցումը ոչ միայն նպաստում է երեխաների գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը,այլև անհատականության ձևավորմանն ու զարգացմանը: Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝

Ստեղծագործական խաղեր	• Սյուժետադերային խաղեր • Խաղ-բեմականացում
Կանոնավոր խաղեր	• Երաժշտական խաղեր • Շարժողական խաղեր • Խաղ-զվարճալիքներ

Արդյունավետ ուսուցումը նպաստում է երեխայի ինքնակազմակերպմանը և ինքնուրույնությանը. այն սկսվում է կրտսեր դպրոցականների համար ուսուցչի կողմից համապատասխան միջավայրի ստեղծումից: Ուսուցիչը լավ է հասկանում, որ վեց տարին նոր լրացած երեխայի մոտ իշխում է ընկերների հետ բացօթյա խաղերի ձգտումը: Բնության, խաղերի, երաժշտության, հեքիաթների սքանչելի աշխարհը, որը շրջապատում էր երեխային մինչև դպրոց գնալը, չպետք է փակվի նրա առջև դպրոցի դռներով: Երեխան միայն այն ժամանակ անկեղծ կսիրի դպրոցը, դասարանը, երբ ուսուցիչը կպահպանի նրա համար այն ուրախությունները, որոնք երեխան ուներ մինչև այդ: Այդ է պատճառը, որ տարրական դասարաններում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և աշակերտներին հնարավորություն ընձեռել՝ մտնելու իրենց համար հիմնական և կարևոր համարվող գործունեության ոլորտ: Չէ՞ որ խաղն առավել գրավիչ է դարձնում ուսուցումը,

կենտրոնացնում երեխայի ուշադրությունը, խթանում մտածողությունը: Խաղի միջոցով ճշգրտվում և ընդլայնվում են երեխայի պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես աշխարհի մասին, դաստիարակվում են ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ: Հովհ. Թումանյանը նույնպես մեծ կարևորություն է տալիս խաղին. «Խաղը մարդու օրինական պահանջն է, նրա լրջությունն է, նրա էությունն է: Կյանքում ամեն բանի նա խաղով է մոտենում, դա նրա ձևն է, նրա մեթոդն է: Եվ ամեն բան, ինչ որ նրան տրվում է խաղով, ուրախությունով ընդունում է, հեշտ էլ յուրացնում՝ առանց ձանձրանալու, առանց հոգնելու»[1]: Հենց այդ նպատակով էլ տարրական դասարաններում (հատկապես՝ առաջին) հարկավոր է ավելի շատ կազմակերպել ուսուցողական խաղեր: Ուսուցիչը պետք է իմանա, որ խաղի բովանդակությունը և կանոնները պետք է հասկանալի լինեն երեխաներին, խաղի բովանդակությունը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքների մակարդակին, խաղերը պետք է լինեն կոնկրետ և նպատակային, իսկ դրանց քանակն ու տևողությունը՝ չափավոր: Խաղը պետք է նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը: Խաղը երեխայի համակողմանի զարգացման, ինքնահաստատման, ինքնակատարելագործման կարևոր միջոց է, որը բացահայտում է նրա բնավորության շատ կողմեր: Խաղի միջոցով երեխային կարելի է և՛ կրթել, և՛ դաստիարակել: Խաղի ընթացքում երեխան դրսևորում է որոշակի ինքնուրույնություն, ձգտում է ինքնահաստատման, ձևավորվում են բնավորության որոշակի գծեր: Խաղի ընթացքում երեխաները ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ: Խաղն ապահովում է հասակակիցների հետ փոխշփումներ, հաճելի մթնոլորտ և համագործակցելու լավագույն պայմաններ: Դասի տարբեր փուլերում անցկացվող խաղերի տեսակներից կարելի է առանձնացնել այն ուսուցողական խաղերը, որոնք համապատասխանում են դասի թեմային և կազմակերպվում են առանձին թեմաների

[1] Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Սարգսյան Ս., Սարգսյան Ռ., Տարրական դասարանների ոսուցիչների վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան, 2007թ., էջ 36:

ուսուցումը նախապատրաստելու, անցածը խորացնելու, ամրապնդելու և ամփոփելու նպատակով:

Խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ.

- խոսքի և արտահայտչականության զարգացում
- ընթերցանության հմտությունների զարգացում,ստացած գիտելիքների կիրառում
- աշխատանք խմբերով
- մեդիահմտությունների զարգացում
- հետազոտելու/ համացանցումորոնելու հմտություններ/
- թվային միջոցները գործածելու հմտություններ
- տեխնոլոգիական հմտությունների զարգացում
- երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում
- անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:

Գլուխ 2: Հետազոտության ընթացքը

Երեխան պետք է ինքն իր վրա կրի պատասխանատվություն ՝ հաղթահարելու կենցաղում հանդիպող դժվարությունները: Երեխաներին մշտապես օգնում և աջակցում են ծնողները, միջավայրը, ուսուցիչները: Դա հենց երջանիկ լինելու նախապայման է: Նրա մեջ պետք է զարգացնել այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ լավատեսությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, պատրաստակամություն՝ օգնելու և աջակցելու ուրիշներին:

Ամերիկացի հոգեբան Միխայ Չիկսենտմիխալին գտնում է.« Երջանկությունը հաճախ իրավիճակի պատահական պարգևն է, բայց մենք կարող ենք անել առավելագույնը՝ այդ պարգևն ստանալու համար»:

Մեր երեխաներին սնունդից և հագուստից առավել անհրաժեշտ են հուզական անդորր և ներդաշնակություն: Եթե երեխան կյանքի առաջին տարում հուզական բավարար կապի մեջ է շրջապատի հետ, ապա դա նախապայման է առողջ և երջանիկ կյանքի:

Խաղը երեխայի համար առաջնային գործունեություն է: Այն զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է:

Երեխան լրջորեն է վերաբերվում խաղին և նույնպիսի մոտեցում էլ պահանջում է շրջապատից:

Խաղը փոքրիկի համար նաև հաղորդակցման և ինքնաճանաչման միակ միջոցն է: Հատկապես կարևոր են այն խաղերը, որոնք հորինում է ինքը՝ երեխան:

Խաղի ժամանակ մասնակիցները պետք է ցուցաբերեն կամքի ուժ, համարձակություն, իրավիճակին ստեղծագործաբար մոտենալու կարողություն, այսինքն՝ բոլոր անհրաժեշտ որակները, որոնք ձևավորում են լավատեսություն:

Կարևոր է նաև հասակակիցների հետ շփումը: Նրանք սովորում են իրարից և ընդօրինակում միմյանց (ցանկալի և անցանկալի վարք): Խաղի ընթացքում հնարավոր

են նաև հիասթափություն, երբեմն վիրավորանքի, վախի և այլ զգացումների դրսևորումներ:

Խաղը որպես գործունեության ձև իրականացնում է մի շարք գործառույթներ.

- ✓ զարգացնող
- ✓ դաստիարակող
- ✓ շփման և հաղորդակցման
- ✓ կարգավորող
- ✓ առողջարարական/ թերապևտիկ

Խաղային գործունեությունը, ինչպես գործունեության յուրաքանչյուր տեսակ, ունի իր կառուցվածքը, որը ներառում է նպատակ, դրդապատճառ, իրականացման միջոցներ, գործողության պլանավորում և գործողության արդյունք: Խաղի կառուցվածքում որպես կարևոր միավոր դիտվում է խաղային դերը, որը մեծահասակի գործողությունների վերարտադրումն է: Խաղում գործում են երկու տիպի փոխհարաբերություններ՝ խաղային և իրական: Թե՛ նախադպրոցական, թե՛ դպրոցական տարիքում արդյունավետ է երեխաների համար կազմակերպել խաղային գործունեությամբ ընթացող ուսուցում: Դրա շնորհիվ նրանք դառնում են դիտունակ, սովորում են համեմատել, դասակարգել առարկաները՝ համաձայն այս կամ այն հատկանիշների: Իսկ դա նպաստում է նրանց մտավոր զարգացմանը, զուգահեռաբար զարգացնում ընկալունակությունը, խոսքը, ուշադրությունը:

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիմնական խմբի՝ ստեղծագործական և կանոնավոր:

1. Ստեղծագործական խաղերն ընդգրկում են սյուժետադերային խաղերը և խաղբեմականացումները:
2. Կանոնավոր խաղերի մեջ են մտնում դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճանքները: Կանոնավոր խաղերն

ունեն կանոններ, բովանդակություն, խաղային գործողություններ և խաղային արդյունք: Դրանց թվին են պատկանում դիդակտիկ խաղերը, որոնք ունեն ուսուցողական բնույթ:

Թերևս բոլոր խաղերը նպաստում են երեխայի զարգացմանը: Խաղային խնդիրների լուծմամբ երեխան ձեռք է բերում այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ մտքի և մարմնի ճկունությունը, հնարամտությունը, սրամտությունը, համբերատարությունը, հանդուրժողականությունը և այլն: Յուրաքանչյուր խաղ ընտրելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Խաղի հոգեթերապևտիկ նշանակությունը

Խաղային թերապիան դիտարկվում է որպես նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հուզակամային, հաղորդակցական ոլորտների դինամիկ շփման (կոռեկցիայի) միջոց: Հոգեբանական աջակցության բազմաթիվ ձևերի մեջ կարևոր դեր ունի խաղային թերապիան: Դրա հիմքում ընկած է երեխայի սիրելի զբաղմունքը և շփման ձևը՝ խաղը: Խաղաթերապիան նպաստում է միջանձնային փոխհարաբերությունների համակարգի ձևավորմանը: Այն անհրաժեշտ է մեծահասակի և երեխայի շտկողական ու զարգացնող փոխհարաբերությունների հաստատման համար: Խաղաթերապիայի նպատակահարմարությունը բացատրվում է երեք գործոնների առկայությամբ:

- Խաղը երեխայի համար առավել յուրացված գործունեության ձև է:
- Խաղի մեջ առկա է մասնակիցների հոգեբանական բնույթի և շփման հետևանքով առաջացող ապրումների միասնությունը:
- Խաղի ընթացքում երեխան ազատ է առօրյա լարվածությունից:

Խաղաթերապիան յուրահատուկ փորձություն է երեխայի սոցիալական և հոգեկան զարգացման համար: Որպես հոգեբանական աջակցության ձև այն ունի իր գործառույթները, սկզբունքները, կազմակերպման ձևերն ու տեխնիկաները:

Երեխայի հոգեբանական վերականգնման արդյունավետությունն ապահովելու համար խաղաթերապիան և խաղային փոխազդեցությունը հիմնվում են որոշակի դրույթների վրա: Դրանք են՝

- չպարտադրված շփում
- դրական հետադարձ կապ
- խաղընկերների ոչ մրցակցային փոխհարաբերություններ
- ներգրավածություն գործընթացում

Գովասանքն իր մեջ չպետք է պարունակի երեխայի հաջողությունների և անձնային որակների համեմատություն, քանի որ այդ պարագայում երեխայի մեջ կառաջանան մերժողական դիրքորոշման, հասակակիցների հանդեպ նախանձի զգացմունքի ձևավորման նախադրյալներ: Նպատակային գովասանքը մեծահասակի կողմից երեխայի գործողությունների արդյունքների, նրա ճիգերի անկեղծ նկարագրումն է:

Այսպիսով, «խաղային թերապիան» մի գործունեություն է, որը քիչ թե շատ նույնանում է խաղի հետ: Խաղը երեխայի ինքնաարտահայտման եզակի միջոց է, որը նրան հնարավորություն է տալիս ազատ ու անկաշկանդ խաղարկել սեփական զգացմունքներն ու խնդիրները:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ շփվելով, մենք մեր առջև դնում ենք խնդիր զարգացնելու երեխայի ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործունեությունը և այլն: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնությունը, ինչ-որ բան սովորելու:

Խաղալով երեխան հասկանում է ինքն իրեն, ճանաչում է իրեն շրջապատող աշխարհը, գիտելիք է ձեռք բերում ամենատարբեր հարցերի շուրջ: Հստակ խնդիրներ ու նպատակներ ունեն հատկապես մտավոր խաղերը, զարգացնել երեխայի հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը, երևակայությունը, քանի որ առանց այդ հատկանիշների անհնար է երեխային ամբողջովին զարգացնել:

Կրտսեր դպրոցականի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումը։ Սակայն դեռ երեկ իր զվարթ խաղերով տարված դպրոցականը չի կարող լիովին զերծ մնալ դրանցից։ Այդ պատճառով, երբ ուսուցումը խելամտորեն զուգակցվում է խաղերով երեխայի համար բացվում է մի նոր առավել հետաքրքիր սրտամոտ ու ցանկալի աշխարհ։ Երբ խաղը մուտք է գործում կենդանի մանկավարժական գործընթացի մեջ դասարանում ստեղծվում է յուրահատուկ միջավայր։ Եթե ուսուցիչ-աշակերտ և ինչու չէ, նաև աշակերտ-աշակերտ հարաբերություններում մինչև այդ գոյություն ունեին ինչ-ինչ պատնեշներ, ապա դրանք աննկատելիորեն անհետանում են։ Խաղի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առաջնային են դրա ճիշտ ու ժամանակին կազմակերպումը և անցկացման հարմար մեթոդները։

Խաղը կազմակերպելիս անհրաժեշտ է, որ խաղը և կանոնները հասկանալի լինեն երեխաներին, խաղի բովանդակությունը համապատասխան լինի խաղացողների գիտելիքների մակարդակին, խաղը նպաստի գիտելիքների հարստացմանը և հետաքրքրությունների ձևավորմանը։

Հետազոտությունն անցկացրել եմ երկրորդ դասարանում՝ ռուսաց լեզվի դասին։ Խաղի միջոցով փորձել եմ պարզել թե դասարանում սովորող աշակերտները որքանով են ուշադիր նոր նյութի հաղորդմանը։

Հետազոտությունը կատարել եմ «Ով ավելի շատ բառեր կասի տրված տառերով» թեման ուսումնասիրելու ժամանակահատվածում։

Երկու դասաժամի ընթացքում կատարել եմ հետազոտությունը։ Հետազոտության ընթացքում կատարել եմ «Լսիր և Արձագանքիր» խաղը, որը իրականացրել եմ իմաստի ընկալման փուլում; Խաղի նպատակն է ստուգել, թե որքանով են աշակերտներն ուշադիր եղել դասին և որքանով են ընկալել նոր ուսուցանվող դասը։ Քանի որ դասը վերաբերվում էր տառեր կրկնությանը նրանց ներկայացրել էի խառը բառապաշար։

Աշակերտներին առաջարկեցի խաղը և բացատրեցի խաղի կանոնները՝ լսել ուսուցչի տված բառերը, և երբ կլսեն կրկնվող տառին վերաբերվող որևէ բառ պետք է ծափ տան։ Բացատրեցի, որ խաղը պահանջում է ուշադրություն, ինչպես նաև խաղը թույլ կտա պարզել, թե աշակերտները որքանով են հասկացել «Տառեր-տառեր» թեման։

Տարբեր բառեր ասացի, և տվյալ տառին վերաբերվող և չվերաբերվող՝ օր, գիրք, միրգ, տանձ, խնձոր, անձրև, տերև, գրիչ, պայուսակ, կանաչ և այլն։ Երբ սկսեցի ասել բառերը և հետևել աշակերտների ակտիվությանը, հասկացա, որ ոչ բոլորն են մասնակցում կամ չէին ընկալել խաղի պահանջը։ Սկզբում քիչ թվով աշակերտներ էին ակտիվ, ապա կամաց-կամաց ակտիվությունը շատացավ, քանի որ աշակերտներն ավելի ուշադիր էին։ Առաջին դասի վերջնարդյունքում ոչ բոլոր աշակերտները մասնակցեցին, բայց բավականին մեծ թվով աշակերտների մոտ նկատվեց ուշադրության կենտրոնացում։

Երկրորդ դասաժամին, որն ևս անցկացվեց ռուսաց լեզվի դասաժամին՝ իմաստի ընկալման փուլում, քանի որ շարունակում էինք ուսումնասիրել «Տառեր-տառեր» թեման։

Աշակերտներին ներկայացրեցի խաղը, բայց այս անգամ բարդացնելով խաղի պահանջը։ Այս խաղի ընթացքում ես պետք է ասեի բառեր և բառակապակցություններ, որտեղ ուսուցանող տառը գտնվում է բառասկզբում, բառամիջում և բառի վերջում։ Երբ աշակերտները լսեն բառը պետք է ծափ տան և դասակարդեն ըստ խմբերի, իսկ երբ լսեն բառակապակցությունը պետք է ոտքի կանգնեն։ Խաղը բացատրելուց հետո անցանք խաղի անցկացմանը։ Հենց առաջին իսկ բառից նկատվեց մեծ թվով աշակերտների ակտիվություն, իսկ մեկ-երկու բառից և բառակապակցությունից հետո գրեթե բոլորը մասնակցեցին խաղին։ Այսինքն եկա այն ենթադրության, որ խաղը կարող է դառնալ ուսուցման համար լավագույն մեթոդներից և ձևերից մեկը։ Երեխան խաղալով կարող է ավելի լավ ընկալել նյութը։

Տվյալների վերլուծություն

Քանի որ այս խաղը 2-րդ դասարանում անց էր կացվում առաջին անգամ, ուստի սկզբնական շրջանում աշակերտները չէին կողմնորոշվում: Երբ Խաղը սկսվեց առաջին իսկ բառից ոչ բոլորի մոտ էր նկատվում կենտրոնացվածություն: Առաջին դասի ընթացքում, երբ անցկացրեցի խաղը, առաջին բառից ճիշտ արձագանքեցին 22 աշակերտներից 4-ը, ապա թիվը կամաց-կամաց աճելով հասավ 6-ի: Մեկ աշակերտ արձագանքում էր, բայց սխալ: Ընդհանրապես չէր արձագանքում և մինչև վերջ էլ չարձագանքեց 2 աշակերտ, որոնք ԿԱՊԿՈՒ աշակերտներ են:

Մի փոքր բարդ տարբերակով, խաղը անցկացրեցի հաջորդ օրը, հենց առաջին իսկ բառից արձանագրեցին նախորդ օրվանից ավելի շատ թվով աշակերտներ, իսկ թիվն աստիճանաբար աճեց: Առաջին իսկ բառից ճիշտ արձագանքեցին 6 աշակերտ, ապա 5, 1 աշակերտ պատասխանեց սխալ, իսկ 2 ԿԱՊԿՈՒ աշակերտները չարձագանքեցին, սակայն նրանցից մեկը նկարեց ուսուցանվող տառը: Վերջնարդյունքում ունեցանք տվյալների աճ:

Այստեղից եկա այն եզրահանգման, որ աշակերտների մոտ ուշադրությունը ավելի էր կենտրոնացած, և վերջնարդյունքում ստացվեց, որ այն աշակերտն որը ընդհանրապես չէր մասնակցել մասնակցեց՝ տալով սխալ պատասխան:

Եզրակացություն

Ուսումնասիրությունը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացությունների՝

- Խաղը կրտսեր դպրոցականի համար ուսուցման լավագույն միջոցներից է:
- Խաղի ընթացքում է, որ ուսուցիչը ավելի լավ է տեսնեում երեխայի ուշադրությունը, ինքնավստահությունը, արագաշարժությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունն ու ճարպկությունը:
- Խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում է խաղի հզորությունը , այն երեխայի համար կարող է դառնալ ոչ միայն ժամանցի ու հանգստի կազմակերպման միջոց, այլև հիմք հանդիսանալ նրանց տրամաբանական մտածողության և արագ կողմնորոշվելու ունակությունների զարգացմանը:
- Խաղային տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ՝ ցանկացած նյութ երեխաների համար դառնում է ավելի հասկանալի ու հաճելի:
- Օգտագործելով խաղային մեթոդները կրտսեր դպրոցականների ուսուցման գարծընթացում կարելի է գալ այն եզրահանգման, որ դասը դառնում է ավելի արդյունավետ ու նպատակային:
- Խաղի ընթացքում երեխան տիրապետում է վարքի բարոյական նորմերին ու կանոններին, որոնք որոշիչ դեր են խաղում նրանց անձի ձևավորման գործում: Զարգանում է աշխատասիրություն, ուշադրություն և պատասխանատվության զգացումը:

Դասի պլան

Դասարան-2

Առարկա-ռուսաց լեզու

Դասի թեմա-«Մ» տառի կրկնությունը

Դասի տեսակը-կոմբինացված

Ուսուցման մեթոդներ-ինքնուրույն աշխատանք

խաղ(ո՞վ կանվանի շատ բառեր Մ տառով)

խաղ(գտիր ավելորդը)

խաղային տեխնոլոգիաներ

Դասի նպատակը

1. Ստեղծել պայմաններ նոր տեղեկության ընկալման համար
2. Կարողանալ թարգմանել **Մ** տառվ բառերը
3. Մշակել мишка և мышка բառերի արտասանության ճիշտ տեխնիկան
4. Զարգացնել սովորողների հիշողությունն ու ուշադրությունը
5. Ստեղծել պայմաններ սովորողի անձնական որակների ձևավորման համար

Խնդիրներ

1. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացում
2. Ընդունակությունների և փորձի զարգացում

Դասի վերջարդյունքներ

1. Ինքնագնահատման կարողություն
2. Գործողությունների հաջորդականության իմացություն
3. Արտահայտել սեփական կարծիքը
4. Գնահատել և պլանավորել գործողություններ
5. Կարողանալ շարադրել մտքերը և լսել մնացածներին

6. Կարողանակ տարբերակել նորը իմացածից, պատասխանել հարցերին

Բանալի բառեր-տառեր և հնչյուններ, արտասանություն

Օգտագործվող ռեսուրսներ-նկարներ խաղերի համար, դասագիրք, տետր, խորանարդիկներ

Դասի ընթացքը

Դասի մոտիվացիա

Ծանոթացնել դասը

Կրկնել դասը

Կրկնել անցածը

Կատարել առաջադրանքներ

Նոր դասի ծանոթացում

Գիտելիքների արդիականացում

Աշխատանք աշխատանքային տետրում

Բառային աշխատանք

Խաղ(մ տառով բառեր)

Խմբային աշխատանք(բաժանել նկարներ)

Խաղի նպատակը-նկարներից գտնել այն բառերը

1. որտեղ **Մ** առը բառասկզբում է
2. որտեղ **Մ** տառը մեջտեղում է
3. որտեղ չկա **Մ** տառը

Ֆիզկուլտդադար

Ուսուցչի «Мишка и мышка» տեքստի շեշտադրումը, երեխաների վարժ ընթերցանությունը, հարցերի պատասխաններ:

Կշռադատում

1.Ո՞րն էր մեր խնդիրը

2.Ի՞նչ մենք արեցինք

3.Որտե՞ղ ենք մենք դժվարացել

4.Ինչպե՞ս մենք լուծեցինք խնդիրը

5.Ի՞նչ սովորեցինք

6.Ինչի՞ վրա կուզենայիք աշխատել

7.Գնահատեք ձեր աշխատանքը

8.Դու՞ր եկավ ձեզ դասը

9.Ի՞նչն էր ձեզ համար նոր

Տնային աշխատանք

1.աշխատանք տետրում

2.ընթերցանություն և տեքստի ներկայացում

3.նկարել տետրում

4.պատրաստվել դերախաղին

Դասի պլան

Դասարան-3

Առարկա-ռուսաց լեզու

Դասի թեմա-«Ուրախ նավակը»

Ածականների հոմանիշներ

Դասի տեսակը-համակցված

Ուսուցման մեթոդներ-ինքնուրույն աշխատանք

խմբակային աշխատանք

խաղային տեխնոլոգիաներ

Դասի նպատակը

1.Սովորել ճիշտ օգտագործել ինչպիսի՞ հարց ունեցող բառերը: Ճիշտ համադրել վերջավորությունները և կազմել բառակապակցություններ

2.Մշակել և զարգացնել ընթերցանության տեխնիկան, բառերի ճիշտ արտասանությունը և թարգմանությունը

3.Դաստիարակել բարեկիրթ վարքագիծ, գնահատել ընկերության արժեքը և ուժը

4.Զարգացնել սովորողների դատողությունը և ուշադրությունը

Խնդիրներ

1.Ամրապնդել բնութագրող և հատկանիշ ցույց տվող բառերի ուղղագրության վերաբերյլ ունեցած գիտելքիները

2.Նկարագրել և բնութագրել առարկաները

3.Զարգացնել շփումը և ստեղծագործական գործունեությունը

Օգտագործվող ռեսուրսներ-դասագիրք, անհատականև խմբային առաջադրանքներ

Դասի վերջնարդյուքներ

1.Կկարողանա բանավոր և գրավոր խոսքի մեջ ճիշտ

կիրառել բնութագրող և հատկանիշ ցույց տվող բառերը

2.Կկարողանա ճիշտ հասկանա և բացատրի «Ուրախ նավակը» տեքստի իմաստը և բովանդակությունը

3.Կբնութագրի հերոսներին և կարտահայտի սեփական կարծիքը հերոսների վերաբերյալ

4.Կկարողանա դատողություններ անել տեքստի բովանդակության շուրջ

Մեթոդներ-մտագրոհ, իմբակային աշխատանք, հարց ու պատասխան

Դասի ընթացքը

Խթանման փուլ-ներկայացնել դասի տեսակը և նպատակը

Մտագրոհի մեթոդով սկսել դասը

–ո՞րն է այսօրվա մեր դասը

–ինչպիսի՞ բառերով ենք նկարագրում առարկաները

–ինչի՞ համար ենք օգտագործում բնութագրող և հատկանիշցույց տվող բառերը

Ստուգել տնային աշխատանքը

Իմաստի ընկալում

Խմբակային աշխատանք-Կազմել 5 խումբ, խմբերը կստանան առաջադրանքներ

1.ընտրել առակա և բնութագրել բնութագրող և հատկանիշ ցույց տբող բառերով

2.բնութագրող և հատկանիշ ցույց տվող բառերին գրել հոմանիշներ և հականիշներ

3.կազմել բառակապակցություններ և գործողություն ցույց տվող բառերով կազմել նախադասություններ

Նոր նյութի հաղորդում

«Ուրախ նավակը»-Աշակերտները ինքնուրույն ընթերցում են տեքստը և

հարց ու պատասխանի միջոցով մեկնաբանում և վերլուծում բովանդակությունը:

- ինչի՞ մասին է տեքստը
- ի՞նչ էին անում ընկերները
- ի՞նչ որոշեցին նրանք
- ինչպիսի՞ որոշում կայացրեցին ընկերները
- ինչպե՞ս նրանք կառուցեցին նավակը
- ինչու՞ գորտը այլևս չէր ծիծաղում
- հայտնեք ձեր կարծիքը ընկերների մասին
- ինչպե՞ս վարվեց գորտը
- ինչպե՞ս դուք կվերաբերվեիք գորտի նման ընկերոջը(կարծիքներ)
- ի՞նչ սովորեցիք այսօրվա մեր դասից

Կշռադատում

- ի՞նչ ես գիտեի
- ի՞նչ ես սովորեցի
- ինչպե՞ս դա կօգտագործեմ
- ինչպիսի՞ ընկեր եմ ես և ինչպիսի՞ ընկերներ կուզեմ ունենալ

Տնային աշխատանք

-սովորել պատմել

–դուրս գրել գործողություն ցույց տվող բառերը

-«Նավակ» բանաստեղծությունը անգիր

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջ Գյուլամիրյան-«Խաղալով սովորենք»-Երևան 2008թ.
2. Վ. Ա. Սուխոմիլնսկի Սիրտս նվիրում եմ երեխաներին, Կիև, 1969թ.
3. Ուշինսկի Կ. Դ. Մանկավարժական ընտիր երկեր, Հ-2 Եր. 1959թ.
4. Ն. Բարսեղյան-«Խաղերը ուսուցման արդյունավետ միջոց»-Երևան 2001թ.
5. Մ. Սիմոնյան-«Խաղը որպես կրտսեր դպրոցականի ճանաչողական գործունեության Բարելավման միջոց»-Երևան 2004թ.
6. Հ. Մամյան-«Խաղը որպես ուսուցման միջոց(Խողերի կիրառությունը դպրոցում»-Երևան 2013թ.
7. Ֆ. Աճեմյան-«Հիշողությունը զարգացնող խաղեր»-Երևան 1999թ.
8. Ա. Օհանյան-«Ուշադրությունը զարգացնող խաղեր»-Երևան 2007թ.
9. Ն. Գրիգորյան-«Ուշադրությունը զարգացնող խաղեր»-Երևան 2012թ.
10. Ա. Բաղդասարյան-«Խաղալով սովորեցնենք»-Երևան 2011թ.
11. Ա. Գևորգյան-«Ուսուցում և խաղ»-Երևան 2013թ.
12. Ե. Թադևոսյան-«Խաղից անցում ուսումնական գործընթացին»-Երևան 2011թ.
13. Գ. Քարամյան-«Խաղային տեխնոլոգիաների կիրառումը տարրական դասարաններում»-Երևան 2012թ.